



3653

ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱՆԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 170

Ե Զ Թ Վ Ա Գ Ռ Ա Ւ

(Հ Ե Ք Ե Ա Թ)

Փ Ա Խ Ա Դ Բ Ե Գ

ՀԵԽՈՆ Մ.-ԱԴԱՄԵԱՆ

№ 3 ՀՐԵՑԵՐԵԿՈՐԾ Ա. ՊՈՎՈՍԵԲԻ ԳՈՒՄՈՒԾ Ա 3



ԹԻՖԼԻՍ

Արագատիպ Մասահան Մարտիրոսեանցի  
Միքայելեան փողոց, տուն 81.

1899

6354

ՄԱՆԳԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# Ե Օ Թ Վ Ա Գ Ռ Ա Կ



Մի մարդ ու մի կնիկ եօթը տղայ զաւակ են  
ունենում, իսկ աղջիկ ոչ մի հատ: Մարդ ու  
կնիկ լինելով շատ աշխատասէր՝ ապրելիս են եղել ան-  
կարիք ու իրար հետ էլ այնպէս համով-հոտով, այնպէս  
համաձայն ու սիրով, որ հարևանների բարի նախահան են  
եղել շարժելիս: Դրանք համարեա ոչ մի պակասութիւն,  
ոչ մի մաշող հոգս չեն ունենում, այլ զրանց մոմտոքը,  
միակ անկատար փափազը՝ աղջիկ զաւակ չունենալն է լի-  
նում: այդ պատճառով էլ մարդ ու կին իրանց աղօթքի  
մէջ շարունակ այն են եղել խնդրելիս Ստուածանից,  
տղաշելիս և պազատելիս, որ իրանք մի հատ էլ աղ-  
ջիկ զաւակ ունենան: Բարի Ստուածը լուս է առա-  
քինի և աշխատասէր ծնողների աղերսանքը և նրանց  
ոնուիրքը կատարում—մի հատ էլ աղջիկ զաւակ է պար-  
լուս:

Ծնողները անշափ ուրախանում են, փառք տա-  
րս իրանց Ստեղծողին և չնորհակալ լինում նրանից:

Հափ չէ լինում նաև եօթը եղբայրների ուրախութեան,  
որ վերջապէս իրանք մի քոյրիկ էլ ունեցան: Խեղճ երե-  
խաները չգիտէին, ինչպէս արտայայտեն իրանց զգացա-  
ծը. նրանք մէկ դէս էին վազում, մէկ դէն էին վազում  
և մէկ էլ կայտառ ուկերի պէս ծլունգ-ծլունգ անում,  
մատղաշ զառնուկների նման խայտում, թռչկոտում, կամ  
պինչը քամի մտած զիժ մոզու նման ծուլ-ծուլ լինում,  
և կամ հաւի նման կրկում, ծիծաղում, ու էլի նորից  
ուրախ մտրուկների նման յանկարծ տրտինգ տալիս, չափ  
ընկնում և իրանց անմեղ հրճուանքով ծնողների ուրա-  
խութիւնը կրկնապատկում:

Երեխան զեռ աշխարհ չեկած՝ մարդ ու կնիկ ուխտ  
էին արել՝ մինչև երեք տարի անկնունք պահել: Երբ  
լրանում է ուխտած երեք տարին՝ ծնողները իրանց  
խոստման համեմատ մատսաղ են մորթում, միար ազգատ-  
ներին բաժանում և սպատրաստութիւն տեսնում՝ իրիկ-  
նազէմ, ինչպէս սովորութիւն է, արեք զեռ մայր չմտած՝  
երեխային մկրտել տալու: Հայրը տղերանցից մեծին  
զրկում է զուր բերելու ջրհորից, որ բաւական հեռու է  
լինում նրանց տանիից: Հայրը միայն մէկին է զրկում,  
բայց միւս վեցն էլ նրա յետելիցն են վազում, որ սիրելի  
քոյրիկի մկրտաթեան հանգէսին իրանք ևս մատնակցած  
լինին:

Վազէ վազ հէնց որ այստեղ են հասնում՝ բոլորը  
միասին վրայ են ընկնում զոյլին, ամեն մէկը կամենա-  
լով, որ անպատճառ ինքը հանէ զուրը, և որը թոկից,  
որը զոյլի տակից, որը ունկից, որն էլ պոնդից ձգձգե-  
լուր ուզում են իրարից խել, ու այդպէս այնքան են  
իրարից քաշում, քաշըշում, որ զոյլին կաղած թոկն էլ







Է կտրում, ունին էլ պոկ զալիս ու ձեռքերից դուրս  
պրծնում, վլորում և շրխկալով թրխկալով՝ ջրհորի մէջ  
ընկնում:

Այս դէպքի վրայ խեղճ երեխաների թուքը ցամա-  
քում է բերաններում. երկիւղից բռնուած, բերանաբաց,  
աչքերը չուած՝ մնում են ջրհորի վրայ կուցած՝ ներ-  
քի նայելիս, էլ շիմանալով իրանց անելիքը:

Չատ սպասելուց երբ հատնում է հօր համբերու-  
թիւնը՝ ասում է.

—Ինչպէս երեսում է այն չարաճճիները կամ կոռի  
բռնուեցին և կամ, ըստ սովորութեան, զարձեալ խաղով  
ընկան, որ այսքան ուշացան. Դէս որ այդպէս է՝ թող բո-  
լորն էլ սև ու կուտան ագռաւ զառնան:

Հայրը իւր խօսքը զեռ նոր էր աւարտել, որ մէկ էլ  
յանկարծ եօթն ագռաւ թևածելով ու կոռելով ներս են  
թուշում սենեակ: Ծնողները երկիւղից ասես թէ տեղն  
ու տեղը քար կտրուեցին մնացին: Ագռաւները կոռելով  
սկսեցին պառյտներ անել սենեակի մէջ, կարծես մնաս-  
քարով էին ասում շուարած ծնողներին և իրանց պիծի  
սիրուն քոյրիկին, որ նոյնպէս զարմացած նորանց էր մախկ  
տալիս, գգալը ձեռշին, վիզը ծուած. Նոյն-իսկ շոմը,  
այդ հաւատարիմ անասունն էլ, գունչը ցցած ու բերանը  
բաց արած՝ ազռաւներին էր մտիկ անում, որոնք էլի մի  
անգամ, բոլորը միտախին կոռեցին և զուրս թուան ու  
զնացին, և այն գնախն էր որ զնացին, էլ չըմերապարձան:

Ծնողները շատ լաց եղան, մանաւանդ հայրը շատ  
զղաց իւր անէծքի համար, շատ ափ ու վիշ արտ,  
բայց ինչ արաւ-շարաւ՝ բան չդարձաւ, իւր տուած անէծ-  
քը յետ վերցնել չըկարողացաւ:

Մկրտութեան հանդէսը, որ փառաւոր պէտք է լինէր՝ անցաւ սուս ու փուս և շատ անշուք. կարծես սպատուն էր. ի՞նչ անէին խեղճ ծնողները. եօթը սիրելի զաւակից էին զրկուել, այն էլ մի օրում և մէկ անգամից: Բայց շմոռացան քահանային խնդրելու, որ երեխայի անունը Անոյշ զնէ, որպէս յիշառակ նրա անգարձ կորած եղբայրների, որոնք նրան այնպէս էին կանչում հինգ նրա ծնած օրից սկսած:

Անոյշն այդ ժամանակ արդին ոտը չորսումը զրած մի այնպէս շքնաղ ու սիրուն արարած էր, որ կարծես յատկապէս քաշած պատկեր լինէր: Մաղերը մետաքսի պէս փափուկ էին և մուգ-շագանակագոյն, ոսկու նման էլ փայլուն. ինքը փումփուշիկ ու կարմրաթշիկ, ամեն մէկ թշի վրայ էլ մի-մի գողտրիկ փոտիկ. մրայօն ճակատը լայն ու այնպէս շարմաղ, ինչպէս մարմարիոն. աշքերը մեղոյշ, ձեռքերը քնքոյշ և հինգ անունն էլ լաւ էին զրել — Անոյշ. իսկ որ անոյշ կատարնալ սառու շաքար իւր անմիտար մեացած ծնողների համար: Անոյշն այդպէս զեղեցիկ էր ոչ միայն արտաքուստ, այլև ներքուստ. վերին աստիճանի ուրախ ընաւորութեան տէր էր, անշափ մաքրասէր, շատ խելօք, խոնարհ կ զեռ մի լաւ հարսի նման էլ տնարար: Բայց և այնպէս Անոյշը զեռ փոքր էր. նա զլխի շընկառ, չհասկացաւ, թէ ի՞նչ պատահեց իւր սիրեց ողբայրներին, որ զնացին ջրի ու էլ լիտ չեկան: Եւ երբ նա զիմում էր կամ հօրը, կամ մօրը և եղբայրների մասին հարցնում՝ նրանք խօսքը միշտ կտուրն էին զցում և եղելութիւնը Անոյշից ծածկում. մինչև անգամ այդ մասին մարդ ու կնիկ իրար հետ էլ չին խօսում, որպէսզի իրանց մինումարը, իրանց աշքի

լոյսն ու միակ յոյսը յանկարծ չիմանայ ու տխրի, սիրտը կոտրուի:

Իսկ Անոյշը, որ միամիտ էր և իրանց պատահած զժրախտութեանն անտեղեակ՝ գոհ իւր վիճակից, ուրախ ու զուարթ՝ օր օրի վրայ աւելի ու աւելի էր զեղեցկանում, փարթամանում և մայիսեան վարդի պէս հետզհետէ բացւում, սիրունանում:

Բայց ինչից որ ծնողներն զգուշանում էին՝ հինգ այն էլ պատահեց:

Անոյշը մի օր իւր հասակակիցների հետ խաղալիս՝ կուռեց հետները և յանդիմանեց նրանց՝ անքաղաքավարի լինելնուն համար: Ընկերունիներից մինը, որ ամենից շարալեզուն էր՝ ուղղակի Անոյշի երեսին ասաց.

— Հնդս զլխիդ, ի՞նչ ես շատ քրքրում. չլինի՞ թէ նրա համար, որ մեզանից սիրուն ես. բայց աւելի լաւ չէր, եթէ զու մի քիչ տգեղ լինէիր և այնպէս զեղեցիկ եղբայրներիդ կորստեան պատճառ չըգաւնայիր:

Անոյշը ոչինչ չասաց, և ի՞նչ կարող էր ասել, քանի որ ինքը այդ բանից անտեղեակ էր. այլ տժգոյն, յուղմունքից իրան կորցրած, լուռ շտապեց տուն, վազեց ընկաւ մօր գիրկը և սկսեց դառնազին լաց լինել: Այնպէս էր թնգթնզում, հեկեկում, թառաչներ քաշում, որ թուռում էր թէ հիմա որտեղ որ է՝ պէտք է շունչը կըտրուի, կամ սիրու տեղից զուրս թուշի: Ծնողները շատ վախեցան. նրանք առաջին անգամն էին տեսնում իրանց որտի հատորին այդպէս լաց լինելիս, այդպէս մղկտալիս:

— Անոյշ, Անոյշ... ի՞նչ է եղել, հոգիս. ինչո՞ւ ես այդպէս մաղիկ-մաղիկ զալիս. ասան, ի՞նչ է վիշտը... Դէ խօ-

սիր, խօսիր, կեանքդ սիրեմ ես. խօսիր, մէկ տեսնեմ,—  
աղջկայ սիրուն զլուխը շոյելով յորդորեց մայրը:

— Եղբայրներիս կորստեան պատճառը միթէ ես եմ,  
— պատասխանեց Անոյշն ու կրկին փուլ եղաւ:

— Հանգստացիր, աղջիկս, հանգստացիր. այդ ո՞վ ա-  
սաց քեզ, թէ պատճառը դու ես,— վախեցած հարցրեց  
մայրը:

— Նունուչն ասաց . . .

Նունուչը սիրալուել է, հոգիս. զու այստեղ մեղ չու-  
նիս. Սստծու կամքով, թէ դժբախտ հանգամանքների  
բերմունքով այդպէս եղաւ, էլ զու ինչ անես,— աշխա-  
տեց աղջկան համոզել հայրը:

— Բայց ես նրանց տեսնել եմ ուզում... Ուզում եմ  
խմանալ, թէ ինչ է նրանց անգարձ զնալու պատճառը...  
ես նրանց տեսնել եմ ուզում...— ասաց Անոյշը և նորից  
սկսեց լալ, առաջուանից աւելի մղկտալ:

Հայրը ջոկ, մայրը ջոկ, կամ երկուսը միասին շատ  
աշխատեցին մի կերպ հանգստացնել իրանց աղջկան.  
բայց երբ տեսան, թէ այլևս անհնարին է զաղանիքը  
պահել, բուն իրողութիւնը նրանից ծածկել՝ ստիպուած  
եղան մանրամասն պատմել նորան ամեն բան:

Այս անցքից յետոյ Անոյշը բոլորովին փոխուեց. նա  
կարծես առաջուայ ուրախ ու զուարթ աղջիկը չէր, այն-  
պէս էր կոտրուել: Այլևս տան մէջ չէր լաւում ոչ նրա  
նախկին քաղցր թոթովանքը, ոչ էլ նրա հնչուն ծիծա-  
ղը, որից կարծես սենեակի պատերն էլ էին ժպտում և  
տանլցոնց հետ ուրախանում: Հաց ու ջրից կտրուեց,  
քունն աչքերից վախսաւ. մտքի յետենից ընկած, մոլորուա-  
ծի նման թափառում էր տան մէջ կամ իրանց պարտէ-

զում, կարծես նախկին Անոյշի սոսուերն էր շրջում: Մեծ  
մասամբ նրան կարելի էր տեսնել տան մի անկիւնում  
նստած, ծնօտը ձեռքին յենած, արտասուր թափելիս:  
Դժբախտ ծնողները մնացել էին բոլորովին տարակու-  
սած, որովհետև քանի նրանք աշխատում էին Անոյշին  
միթարեկ՝ այդ բանից նա աւելի էր տիրուամ, ուստի  
իրանք էլ նրա հետ մորմոքում էին, միայն հեռուից  
դիտելով:

Վերջապէս խղճի խայթին այլևս չկարողանալով գի-  
մանալ՝ Անոյշը մէկ օր էլ վճռում է հայրական տանից  
հեռանալ, ընկնել չօլէ չօլ, աշխարհէ աշխարհ ման գալ,  
որոնել իւր եղբայրներին, գտնել և կախարդանքից ազա-  
տել: Եւ երբ նա իւր մտադրութեան մասին յայտնում է  
ծնողներին՝ նրանք սարսափում են իրանց մինուճարի  
այդ մտքից և ամեն կերպ աշխատում համոզել, որ նա  
այդպէս բան չանէ և իրանց սև օրը աւելի խաւարացնէ.  
բայց երբ տեսնում են Անոյշի հաստատուն կամքը՝ «Երևի  
Սստծու մատը խառն է այս բանում», ասում են մտքե-  
րում ու այլևս չեն ընդդիմանում:

Միւս առաւօտետն Անոյշը սովորականից վաղ զարթ-  
նելով՝ ճամբի սպատրաստութիւն է տեսնում և ապա զը-  
նում, ծնողների հետ համբուրւում, նրանց օրհնութիւնն  
առնում, մօր մատանին էլ իրրե յիշատակ վերցնում,  
մնաս-բարով ասում, Սստուած կանչում ու ճամբայ ըն-  
կնում: Գնում է, զնում—շատ ու քիչն Սստուած զիտէ—  
մինչև որ հասնում է աշխարհի ծայրին: Այլտեղ Անոյշը  
կամենում է մօտենալ արեին և նրանից խորհուրդ հար-  
ցնել իւր եղբայրներին զանելու համար. բայց արեն  
այնպէս տաք էր, այնպէս սարսափելի ու դաժան, որ

իսկոյն ուզում էր լափել ձեռքն ընկած երեխային։ Անոյշն յետ դարձաւ ու փախաւ և գնաց լուսնի մօտ։ բայց սա էլ անչափ սառն էր, արևի նման էլ դաժան։ Անոյշը դեռ շատ հեռու էր, որ լաց, թէ ինչպէս լուսինը վնթվլնթում էր.

—Այս ինչ մարդահոտ եմ զգում։ ո՞վ է ինձ մօտենում։

Լեղեպատառ Անոյշը այդտեղից էլ փախաւ ու գնաց աստղերի մօտ։ Աստղերը ոչ արևի պէս տաք էին, և ոչ լուսնի նման սառը, ոչ էլ նրանց նման դաժան, նրանց պէս սարսափելի։ այլ նրանք ամենքն էլ զուարժ դէմքով էին և քաղցրաժամկետ երեսով։ նրանք շատ սիրով ընդունեցին փոքրիկ աղջկան։ Աստղերից ամեն մինը նրատած էր իւր աթոռակի վրայ։ Երբ Լուսաստղը տեղից վեր կացաւ, սյսինքն Աղօթարանը բացուեց՝ պայծառ շողերով մի այնպիսի հրաշալի լոյս սփռեց իւր շուրջը, որ մեր Անոյշը սաստիկ յուզուած ու հիացած՝ իւր փոքրիկ թևերը դէպի նրան մեկնելով, բացազանչեց.

—Ո՞վ Լուսաստղիկ, սիրուն աստղիկ։

Եղբայրներս ո՞ւր են գընացած։

Ասա ինձ, աստղիկ գեղեցիկ,

Քեզ եմ դիմում բազկատարած։

Աղօթարանը Անոյշին նայեց և քաղցր ժպտաց — աւելի բացուեց ու մօտենալով փոքրիկ աղջկան՝ քնքութեամբ համբուրեց։ Այդ համբոյրից Անոյշը կարմրեց, փարթամ ալ-փարդ դարձաւ և կարծես մեծացաւ, արբունքին հասաւ ու առաջուանից էլ աւելի գեղեցկացաւ։

—Սիրուն աղջիկ, —խօսեց Աղօթարանը, — Եղբայրներով ապրում են Աղահանքի սպիտակ սարում, ջահէլ Արծուի ամրոցում, որի երկար տարիների ֆակ մնացած

գուռը միայն այս ոսկէ բանալիով կարելի է բանալ։ Ահա, առ, սիրուն աղջիկ, առ գնա, ազատիր եղբայրներիդ ու նշանածիդ, — ասաց Լուսաստղը, նորից մի համբոյր զբանեց Անոյշի ճակատին ու ինքը թռաւ, ամսերում թաք կացաւ։

Անոյշը չնորհակալութեան զգացմունքով լի, զողոցուն ձեռքերով բանալին փաթաթեց թաշկինակի մէջ, զրափանը դրաւ ու ճամբայ ընկաւ։ Գնաց, գնաց, մինչև զէմ առաւ Աղահանքի սպիտակ սարին — ջահէլ Արծուի ամրոցին, որ արեգակի վառ ու շողշողուն ճառագայթների տակ այնպէս էր փայլում, փայլվում, պապղին տալիս, որ թռում էր, թէ ամբողջը ամրոցը հրդեհուած այրուում էր, կամ հակայական թէժ կրակ էր, ալաւին էր տալիս։ Անոյշը հիացմունքից մնաց վեր քաշուած, արմացած ու զարմացած։ նա իւր օրում այդպէս սքանչելի, այդքան հրապուրիչ բան չէր տեսած։

Պատմում են, թէ այդ ամրոցում, մեզանից շատ տարի առաջ, իւր մինուճար որպու հետ մի որբեայրի իշխանուհի էր ապրում։ Իշխանուհին մի անսիրտ, անչափ ժլատ ու շատ շար կին է լինում։ Մի օր մայր ու որդի պարտիզում զբունելիս՝ մի աղքատ պառաւ է մօտենում և ողորմութիւն խնդրում։ բայց իշխանուհին ոչ միայն ողորմութիւն չէ տալիս, այլ զեռ հրամայում է իւր սպասաւորին, որ նա ծեծելով զուրս վոնդէ պառաւին։ Իսկ պառաւը կախարդ է լինում։ նա վշտանալով ժլատ իշխանուհու այդ անխիզճ վարժունքից՝ բերանը բաց է անում և նրա զիխին անէծք թափում։

—Տիկին, — ասում է աղքատ կինը, — քանի որ զու այդպէս անողորմ ես և այնպէս քարասիրտ, որ շետ կ

մենում Աստծու տուած այդքան հարստութիւնից մի չընչին մասը տակ ինձպէս աղքատին՝ թող ուրեմն քո այդ մինումարդ մարդկային կերպարանքից զրկուի, արծիւ դառնայ:

— Ահ, — սարսափած բացագանչում է մայրը:

— Այն, ժլատ ու անսիրտ տիկին, — շաբունակում է խօսքը կախարդը. — քանի որ այդ անբաւ ունեցածդ ամուր պահելով, ոչ մի բարի գործ չես կատարում — ոչ որբի ես միսիթարում, ոչ չունեորի օգնութեան ձեռք մեկնում, ոչ ճամբորդի ես կերակրում և ոչ նոյն-իսկ աղքատի մասն ու բաժին հանում, — թող ուրեմն այդ անպէտք ու անօգուտ հարստութիւնդ փակուած մնայ ամրոցիդ պահարաններում՝ ինչպէս որ կատուից վախեցած մկներն են թաքնուում իրանց ըներում: Այս սպասաւորդ, որ երբէք լաւ բան չէ արել, իսկ քո տմարդի հրամաններդ ամենայն ճշտութեամբ էր կատարում, և հէնց հիմա էլ անխիղճ հրամանդ աւելորդով կատարեց և հետա այսպէս կոպտարար վարուեց, թող ուրեմն զա գաճած դառնայ և զատապարտուի պահարանութիւն անելու քեզ պէս ժլատ աղջիկ-պարոնի աւերակ ամբոցին:

Ապա կախարդ պառաւը մի արկդ տուեց սպասաւուրին և ասաց.

— Ահա, անպիտան ծառայ, վեր առ այս արկդիկը և խնամքով պահիր: Երբ տարիներից յետոյ Լուսատողն ուղարկէ երիտասարդ պարոնիդ հարսնացուն՝ այս արկդիկը կրտաս նորան որսպէս հարսնական ընծայ: Բայց զգայց, որ ասացին անպատ քնած միջոցին նա չարթնանայ այս անիծած ամրոցում, այլ թող քնած հեռանայ այստեղից ։ Արկդիկը իւր մայրական յարկի տակ բանայ. որովհե-

տե միայն այդպէս վարուելուց յետոյ կանցնի անէծքիս զօրութիւնը և կախարդուածներդ էլ ձեր նախկին կերպարանքն ու դիրքը կստանաք:

— Սակայն դու, տիկին, — պառաւը կրկին զիմեց իշխանուհուն, որ սարսափից զողում էր, — դու չես արժանանայ ոչ այդ երջանիկ օրին և ոչ մինումարիդ թագն ու պսակին, այլ հէնց այս ըոպէից, անսիրտ տիկին, պէտք է չքուես, չքանաս և ընդ միշտ ոչնչանաս: — Ասաց կախարդը, ձեռքի գաւաղանով ամուր խփեց զեանին ու երեսը շրջեց զնաց:

Պառաւը շեմքից ոտքը դուրս զնելուն պէս՝ անմիջապէս կատարուեցին նրա բոլոր ասածները. — պատանի իշխանազնը զարձաւ արծիւ և սկսեց ճախրել օդում. յաղթանուղամ ու աժզահայ սպասաւորը կծկուեց, կծկուեց և կարճիկ ոտքերով, սպիտակ ու երկար միրոքով զանածի փոխուեց. իսկ իշխանուհին և ամրոցում եղածները, չնշաւոր թէ անշմնչ, մի ակնթարթում այնպէս անյատ եղան, ոչնչացան, որ կարծես այդտեղ երբէք ոչինչ չէր եղել, ոչ ոք չէր շրջել, ոչ մի կենդանի չունչ չէր ման եկել: Այդ ընդհանուր աղէտից ազատուեց միայն մի սենեակ վերին յարկում, մէջը մի պատրաստի մահճակալ, նոյնպիսի մի հացի սեղան և քանի մի հատ էլ աթու ու աթուակ:

Անոյշի եղբայրները, երբ իրանց զժութեան համար ծնողի անէծքի տակ ընկնելով, զատապարտում են հայրական տանից հեռանալու՝ երկար ժամանակ զէս ու զէն են ընկնում, շատ թափառում, բայց ոչ մի տեղ հանգստութիւն չեն զանում: Վերջապէս մի օր էլ զալիս հասնում են Արծուի ամրոցին և հիւրլնկալում: Երեկոցին

ընթրելիս ազուաւացած եղբայրները երբ իմանում են պաճաճի պատմածից, որ իրանց հիւրընկալը իրանցից աւելի գժբախտ է՝ անկեղծօրէն ցաւակցութիւն են յայտնում նորան և խօսք տալիս՝ երբէք նրանից չհեռանալ, այլ անբաժան միասին մնալ և միմնանց թե ու թիկունք լինել, իրար օգնել, մինչև որ հասնի իրանց փրկութեան, իրանց ազատութեան օրը։ Ուրեմն շատ ուղիղ են ասել, թէ թշուառն է թշուառին կարեկից լինում և մարդ իւր նմանին աւելի է սիրում։ Ինչեցիք։

Անոյշը եկել, ահա այդ ամրոցին էր հասել, որի գեղեցկութիւնից այնպէս էր յափշտակուել, որ ոչ միայն բանալին, այլ ամեն բան էր մոռացել։ Առաջին զօրեղ տպաւորութիւնից յետոյ, երբ ուշքի զալով կամենում է ներս մտնել, տեսնում է զուուը փակ՝ խեղճ աղջիկը մընում է տարակուսած։ Չատ մտածելուց յետոյ, երբ որիէ հնար չէ զոնում զուուը բանալու՝ ճարահատուած, աւելի ևս եղբայրների կարօտից և նրանց ազատելու մաքից զրդուած՝ վճռում է ճկոյթը տաշել, բարակացնել և զրանով փակ զուուը բանալ։ Եւ երբ ձեռքը տանում է զըրպանը, որ զանակը հանէ իւր մտազրութիւնն իրագործելու՝ մէկ էլ յանկարծ միտն է ընկնում բանալին և յիշում ամեն բան։ Ուրախացած՝ խկոյն հանում է թւաշինակը, կշկուը յետ անում, բանալին հանում, զուուը բաց անում, Աստուած կանչում ու ներս մտնում։

Գաճաճը երբ տեսնում է զոնից մի սիրուն ու շարմաղ աղջկայ ներս մտնելը՝ առաջ ու առաջ շատ է զարմանում, թէ այդ ինչ հրաշք է։ բայց յետոյ կարծես մի ինչ-որ բան է յիշում և որքան իւր կարճիկ ոտներում ոյժ է լինում՝ փալի-փալի անելով վազում է դէպի Անոյշը և հարցնում։

— Ո՞ւմն ես կամենում, զաւակս. ո՞վ ես և ո՞ւմ մօտից ես զալիս, որ կարողացար մեր այսքան տարուայ փակ զուուը բանալ։

Անոյշը, որ սկզբում վախեցել էր վազէվազ դէպի իրան եկող տարօրինակ մարդուց, այժմ լսելով նրա քաղցրութեամբ և յարգանքով խօսելլ՝ սիրու է առնում և պատասխանում։

— Ազուաւացած եօթը եղբայրների քոյրն եմ ես, պապի։ Լուսաստղի մօտից եմ զալիս. նա ինքը տուանձ այս տան զուան բանալին և ասաց, որ ես իմ եղբայրներին այստեղ կըտեսնեմ։ Ճշմարիտ է, որ նրանք այստեղ են, և այժմ ուր են։

Լուսաստղի անունը լսելուն պէս՝ խեղճ զաճաճի սիրտը թունգ է լինում և քիչ է մնում ուրախութիւնից ճիչ արձտիկ։ բայց մի կերպ իրան զսպում է և պատկառանքով լցուած՝ խորը զլուխ է տալիս Անոյշին և ասում։

— Ճշմարիտ է, ազուաւ-պարսները այստեղ են ապրում, բայց այս բոպէխս տանը չեն. նրանք իմ ազնիւ ոլորոնկ Արծուի հետ որսի են զնացել, երեկոյեան կըվերադառնան։ Եթէ զու այնքան բարի լինիս, որ սպասես մինչի նրանց վերադարձը՝ նրանք անշափ կուրախանան։

Եւ երբ Անոյշը մնալու հաւանութիւն է տալիս՝ զաճաճը մեծ յարգանքով նրան առաջնորդում է ամրոցի այն ողջ մնացած սենեակը, ուր Անոյշի եղբայրներն էին զերում, և ինքը հեռանում։

Սենեակի մէջ տեղը զրած հացի սեղանի վրայ պատրաստի եօթը բաժին կար զրուած։ Անոյշն ամեն մէկից մի պատառ կտրում ուտում է, զաւաթներից էլ մի-մի կում խմում, իսկ մօր մատանին վերջինի մէջ զցում ու

զնում մահճակալի վրայ պառկում։ Խեղճ աղջիկը շատ  
էր յոգնած, ուստի հէնց որ զլուխը բարձին է զնում՝  
անմիջապէս քուն է մտնում։

Իրիկնադէմ վերադառնում են որսի զնացողները—ա-  
զուաւ-եղբայրներն ու նրանց հիւրընկալող Արծիւր. երբ  
ներս են մտնում ամրոց՝ զաճաճը մօտենում է և ասում.

—Յարգելի պարոններ, խնդրեմ հանդարտ մնաք և  
աղմուկ չանէք, որովհետեւ վերև սենեակում մի աղջիկ  
կայ քնած, որին Լուսաստղն է ուղարկել...

—Եթէ այդպէս է,—զաճաճի խօսքն ընդհատում է  
Արծիւր,—ուրեմն նա իմ հարսնացուն է... Փառք քեզ,  
Սստուած, վերջապէս հասաւ մեր փրկութեան ժամը,—  
բացազանչում է նա և թուչում վեր՝ ըուպէ առաջ իւր  
հարսնացուին տեսնելու, նրան ողջունելու և բարի գա-  
լուստ մաղթելու։

Սակայն Արծիւր երբ մտնում է սենեակ՝ նրա աշ-  
քերը փառակալում են և նա կարծես կուրանալով մարդ  
չէ տեսնում սենեակում։ Դժբախտ երիտասարդը տխուր  
ու տրտում գուրս է զալիս սենեակից և զնում միւսնե-  
րին պատմում, որ ինքը ոչ ոքի չըտեսաւ սենեակում։  
Սակայն երբ զնում են ազուաւ-եղբայրները, ինչ են տե-  
սնում. մի զեղեցիկ, մի աննման սիրուն աղջիկ, պառկած  
և մշմշալի քնած մահճակալի վրայ։ Նրանք խոկոյն շրջա-  
պատում են աղջկան և ոկում՝ հիացած, ամբողջովին  
յափշտակուած մտիկ տալ նորան։ Անոյշն այնպէս խոր ու  
քաղցր քնի մէջ է լինում ընկդմուած, որ չէ խմանում ոչ  
Արծուի զալն ու զնալը և ոչ եօթը եղբայրների ներս  
մտնելն ու իրան շրջապատելլ։ Բացի Անոյշի մեղմ ու հա-  
ւասար չնշառութիւնից ուրիշ ձայն ծպտուն չէր լուսում

սենեակում։ Ինչպէս ասում են, ճանձ որ թոշէր՝ բզզոցի  
ձայնը կըլսուէր։

Այդպէս մի քանի ըուպէ հազիւ էր անցել, որ մէկ էլ  
յանկարծ լուռթիւնն ընդհատելով՝ անդրանիկ եղբայրը  
բացազանչում է.

—Բայց սա հօ մեր քոյր Անոյշն է, և ի՞նչպէս էլ  
մեծացել, սիրունացել է...

—Այս, դորդ որ,—ընդհատում է նրան երկրորդ եղ-  
բայրը.—Ի՞նչպէս հէնց սկզբից չկարողացանք ճանաչել  
այս ոսկեզոյն ու փայլուն մազերից, որոնք երկարացել,  
այսպէս սիրուն վարսեր են դարձել։

—Այն, այն, եղբայրներ,—վրայ է բերում երրորդը,  
նա է, Անոյշը։ Ահա, տեսէք նրա կլոր ու սիրուն թշերն  
իրանց գողտրիկ փոսիկներով։

—Իսկ ես ճանաչեցի նրա կամարաձև սիրուն յօն-  
քերից,—ասում է չորրորդ եղբայրը։

—Ես էլ քնքոյշ ձեռքերից,—ձայնում է հինգերորդը։

—Էլ ինչ կասկած, որ սա մեր քոյրն է,—հաստա-  
տում է վեցերորդը։

—Տայ Սստուած, որ ձեր ասածը ճշմարիտ զուրս  
զայ, վասնղի այն ժամանակ զուցէ մեր փրկութեան  
ժամն էլ հասած լինի. բայց եթէ արթուն լինէր՝ ես  
կարող էի Անոյշին ճանաչել իւր քաղցր ու մեղոյշ աշ-  
քերից,—առարկում է եօթներորդ եղբայրը։

Ապա մի ըուպէ լուռ մնալուց յետոյ ամենքը միասին  
բացազանչում են։

—Այս, երանի թէ շուտ արթնանար և իւր սիրու-  
թքերը բանալով՝ մեզ աղատէր կախարդանքից։


Անոյշը եղբայրների բոլոր ասածները լսում էր

պէտ և մտքի մէջ հրճում, բայց նա այնպէս էր կարծում, թէ ինքը երազումն է այդ խօսքերը լսում։ Եւ հէնց այն է, եղբայրների համբերութիւնը հատնելով, ուզում էին արթնացնել Անոյշին՝ որ գաճաճը, գուշակելով ամեն բան՝ շտապ ներս ընկնելով արգելում է.

— Իսէր Աստծու, սպարոններ, այդպէս բան չանէք.  
Ճեր քոյրն այս անզամ չպէտք է արթնանայ այստեղ, անէծքի տակ ընկած ամրոցում։ այլ պէտք է անպատճառ քնած հեռանայ այստեղից։ Ահա այս արկղիկը ես դորան եմ ընծայում։ Երբ դրան հէնց այդպէս քնած տանէք տեղ հասցնէք և ճեր հայրական տան դուանը վայր դնէք՝ անխօս և անմիջապէս դուք պէտք է վերապառնաք կրկին այստեղ։ Իսկ երբ ճեր քոյրը, հայրական յարկի տակ ոտք դնելուց յետոյ, այս արկղիկը տանի և իւր սենեակում բանայ՝ ահա միայն այն ժամանակ, Աստծու ողորմութեամբ, մենք իսկոյն ազատուելով կախարդանքից՝ մեր նախկին կերպարանքը կստանանք։

Գաճաճի այս ասածներն ևս սպարզ լսում էր Անոյշը, բայց էլի նորան այնպէս էր թւում, թէ, իրաւ, երազ է տեսնում։

Անոյշի ազուաւ-եղբայրները երկար ճանապարհ պէտք է կտրէին, ուստի սեղան են նստում, որ նիւթ առնեն, կազզուրուեն անցնելիք ճանապարհի համար։ Նստելնուն պէս ամենքը ևս նկատում են, որ թէ իրանց բաժնից են կտրել և թէ զաւաթից խմել, բայց ոչինչ չեն ասում, զիտենալով ու այդ բանը քնած աղջիկը կըլինի արած։ Ընթրիքն արդէն վերջանալու վրայ էր, երբ եօթներորդ եղբայրը իւր զաւաթից խմելիս զգում է, որ մի բան





բերանն ընկաւ. խկոյն հանում է և տեսնում, որ իրանց  
մօք մատանին է:

—Եղբայրներ, հրճուած բացազանչում է նա,—Ճիշտ  
էր ձեր ասածը. քնած աղջիկը մեր քոյր Անոյշն է: Ասա-  
ծիս իբրև հաստատ ապացոյց, ահա մեր սիրելի մայրի-  
կի մատանին, որ անշուշտ Անոյշն է բերել և զաւաթիս  
մէջ զցել, թէ չէ ուրիշ ո՞վ պէտք է բերէր պատեղ մայ-  
րիկի մատանին:

Մօք մատանին այլիս որեէ կասկածի տեղիք չըթո-  
ղեց, որ քնածը իրանց քոյր Անոյշն է. ուստի անմիջա-  
պէս վեր կացան, Սատուած կանչեցին ու սրտի թրթու-  
ցով, աղատութեան յուսով՝ որը թներով, որը կտուցով  
զգուշութեամբ բարձրացրին Անոյշին դէպի վեր ամպե-  
րը, դէպի կապոյտ երկնակամարը:

Այնպէս պարզ, լուսնկայ գիշեր էր, որ կարծես լոյս  
ցերեկ լինէր: Անոյշը քաղցր թմրութեան մէջ ընկած,  
կէս-քուն, կէս-առթուն, կախարզական արկղիկը զոգը,  
նստած եղբայրների թների վրայ, ասես թէ թագուհի  
լինէր իւր գահի վրայ բազմած: Նա զգում էր, թէ ինչ-  
պէս արագութեամբ սլանում են ջինջ օղեղէն ովկիանո-  
ւում. զգում էր, թէ ինչպէս իւր եղբայրները, աղատու-  
թեան յուսով վառուած, համերաշխութեամբ, միաբան  
ուժով շարունակ կրկնապատկում էին իրանց եռանդը և  
իրար քաջալերելով, միմեանց սիրտ տալով՝ անզաղար  
առաջ էին սլանում, որ ժամ առաջ հասնեն իրանց նպա-  
տակին: Տեսնելով եղբայրների այդպիսի ջանքը՝ քոյրն  
էլ աղօթք էր մրմնջում իւր մտքի մէջ և Սատուծոց  
օվնութիւն ու նրանց թների համուր ոյժ խնդրում:

Լոյսը նոր էր սկսել բացուել, երբ նրանք հասան

հայրենի գիւղին։ Բարձրութիւնից հետզհետէ կամաց-կամաց իջնելով՝ եղբայրները զգուշութեամբ վայր են զնում թանկագին բեռը իրանց հայրական դռանն ու իրանք լուս ու անխօս խկոյն ևեթ վերադառնում արծուի ամրոցը։

Անոյշն իրան զգալով գետնի վրայ՝ աչքերը բաց է անում և տեսնում, որ ինքը իրանց դռանն է. խկոյն վեր է կենում, փառք տալիս Աստծուն և շտապում տուն, ծնողների մօտ։ Իսկ ծնողները երբ յանկարծ, բոլորովին անսպասելի կերպով, տեսնում են իրանց կորած համարուած աղջկայ այդպէս վաղ-վաղ ներս մտնելլ՝ զարմանքից վեր են քաշում, չըհաւատալով իրանց աչքերին։ Բայց երբ Անոյշը իւր քաղցր ձայնով «հայրիկ, մայրիկ» է կանչում և. վրայ վագում, վզներովը փարում՝ նոր հաւատում են, որ տեսածները խաբուաէկ երևոյթ չեն, այլ իրանց խկական Անոյշը. խկոյն իրանց զիրկն են առնում և կարօտալի համբոյրներով նրա երեսը ծածկում։

—Ախ, այս զո՞ւ ես, մեր աննման Անոյշ... մի՛թէ իրաւ դու ես, մեր աչքի լոյս, մեր միակ յոյս... մի՛թէ դու ես,—անդադար կրկնում ու երեքկնում էին ծնողները և փոխ-առ-փոխ, նորից ու նորից համբաւում, իրանց գորովով լի կրծքերին սեղմում։

—Այն, սիրելիք, այն, ես եմ, ձեզ սիրող Անոյշը,—ժպտալով պատասխանում է Անոյշը և մի առ մի պատմում նորանց, թէ ինչ ու ինչ է անց կացել իւր զիխովը։ —Ժատին համբերեցիք, քչին էլ համբերեցէք, սիրելիք. Աստծու ողորմութեամբ շուտով եղբայրներս էլ կըվերազառնան մարդկային կերպարանք առած և մոռայնել կըտան ձեզ ձեր քաշած վիշտն ու տխրութիւնը,—վեր-

զացնում է խօսքն Անոյշը և զնում իւր սենեակը մըտնում ու կախարդական արկղիկը բաց անում։

Բայց ի՞նչ. մէջը, փոխանակ թանկագին զարդերի՝ մի փոքրիկ հայելի է լինում դրած։ Եւ երբ այդ հայելին ձեռքն առնելով նայում է վրան՝ Անոյշը սաստիկ կարմրում է, յուգում, շփոթում, վասնգի հայելու մէջ նա տեսնում է իրան թանկագին զարդերով ու չըեղ հագուստով այնպէս զուքուած ու զարդարուած, ինչպէս մի հարսնացու, որին հէնց նոր պէտք է տանեն եկեղեցի պատկելու։ Կախարդական հայելու պատճառած ամօթիածութեան կարմրութիւնը դեռ չէր անցել Անոյշի շարմաղ երեսից, որ ներս են զալիս եօթը եղբայրները, մարդկային կերպարանք առած, հետերն էլ իրանց հիւրընկալ Արծիւ իշխանազնը, որ մի կտրիճ երիտասարդ էր զարձած։ Մի քիչ յետոյ էլ, երիտասարդների ուրախութեան ճիշ ու աղաղակների վրայ, ներս են մտնում նաև ծնողները։

Թէ որքան մեծ է լինում ծնողների ուրախութիւնը, երբ տեսնում են, որ իրանց կորցրած մանուկ տղաները այժմ արբունքին հասած երիտասարդներ են դարձած, բոլորն էլ ողջ և առողջ ու իրանց մօտ՝ այդ ոչ բերնով կարելի է պատմել և ոչ զրչով զրել. այդպիսի ուրախութիւնը՝ անհրաժեշտ է, որ մարդ իւր սեփական աշքերով տեսնէ։

Երիտասարդ իշխանը հաւանելով Անոյշին՝ անմիջապէս նրա ձեռքն է խնդրում ծնողներից, որոնք ուրախութեամբ համաձայնում են և իրանց ծնողական օրհնութիւնը տալիս և աղա մեծ շուք ու հանդէտով երիտասարդ զոյզի նշանագրութիւնը տօնում։




Իսկ միւս օրը իշխանը իւր նշանածի ու նրա բոլոր  
ազգական-բարեկամներով վերադառնում է իւր հայրական  
ամրոցը, որի վրայից կախարդանքն արդէն վերացած  
լինելով՝ վերստին իւր առաջուան շուքն ու փառքն էր  
ստացել:

Երիտասարդ իշխանը զոհ և ուրախ սրտով մեծ  
պատրաստութիւն տեսնելով՝ ամբողչ եօթն օր, եօթը  
զիշեր մի այնպիսի փառաւոր հարսանիք է կատարում,  
որի նմանը այդ ամրոցում զեռ չէր եղած նրա հիմնուելու  
օրից սկսած։ Հարսանիքի օրը իշխանը հրամայել էր, որ  
իրանց զիւղի բոլոր չուներներին լիացնեն։ Իսկ իբրև  
իւր հարսանիքի յիշատակ՝ այնուհետև ամեն մի ուզող  
պէտք է հեռանար ամրոցից զոհ և բաւական։ Բայց որ  
զլիսաւորն է՝ նա միշտ էլ հաստատ մնաց իւր այդ զո-  
վելի որոշմանը և խղճի դէմ ոչինչ չարաւ, ոչ մի անար-  
դար ու տմարդի զործ չկատարեց։ Նա իւր պապի նման  
բարի, ողորմած ու արդարադատ լինելով՝ այզպէս էլ  
մնաց մինչև իւր կեանքի վերջը։

Բարութեան, ողորմածութեան կողմից իւր իշխան  
ամուսնուց պակաս չէր նաև իշխանուհի դարձած և իւր  
մուրագին հասած Անոյշը, որի արևոտն էին երդուում բո-  
լոր որբերն ու այրիները։

Այդ ամեն բարի զործի հետ Անոյշը խառնում էր  
նաև զուարձականը – հետզհետէ, աւագութեան կարգով,  
եօթը եղբայրների կանաչ-կարմիրը կապելով՝ հասցրեց  
իրանց մուրագներին։ Փոքրիկ ընթերցողներ, տայ Աս-  
տուած, որ դոք էլ հասնէք ձեր մուրագին ու փափագին։



ՄԱՀԱԳԻՒԹԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



MAL007018

